ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/30

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Է. Չատինյանի /լիազորագիր տրված՝ 01.03.2019թ./

Քննելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ջեռուցման մարտկոցների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-3/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից 04.03.2019թ. ներկայացված և 05.03.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/30 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>«Հարությունյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Հարությունյան Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 04.03.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ»-ի կարիքների համար «ջեռուցման մարտկոցներ» ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-3/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ են ներկայացրել «Հարությունյան Շին» ՍՊԸ, «ՄԱԺԷՎ» ՍՊԸ, «Էլիտ Հիլզ» ՍՊԸ, «Մարմիկ» ՍՊԸ, Գրիգոր Այվազյան ԱՁ-ն:

2019թ. փետրվարի 13-ի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ էլեկտրոնային աճուրդին մասնակցած բոլոր մասնակիցների, այդ թվում նաև բողոքաբեր «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ճանաչվել է բավարար:

Թիվ 2 արձանագրությամբ էլեկտրոնային աճուրդում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն:

2019թ. փետրվարի 25-ին գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել է թիվ 3 արձանագրությունը, որով որոշվել է «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի հայտը մերժել և հրավերով սահմանված որակավորման փաստաթղթեր ներկայացնելու առաջարկ ուղարկել 2-րդ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին:

Նշված որոշումը կայացվել է այն պատճառաբանությամբ, որ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 09.02.2019թ., դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով /դրոշմանիշային վճարի մասով/ ունի ժամկետանց պարտավորություն 329,000 ՀՀ դրամի չափով:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

2019թ. փետրվարի 25-ի թիվ 3 արձանագրությամբ, որպես «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի հայտը անվաբարար ճանաչելու իրավական հիմք, գնահատող հանձնաժողովը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը:

Համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի՝ Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով

նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ անհրաժեշտ է հասկանալ, թե որո՞նք են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները և արդյո՞ք «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարը հանդիսանում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ:

Այսպես՝

2018թ. հունիսի 11-ի ՀՀ կառավարության **Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 702-Լ որոշման 11-րդ կետի 2-րդ ենթակետի՝**Կոմիտեի խնդիրներն են՝պետական հարկերի և վճարների վճարման նկատմամբ հսկողության իրականացումը.

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. ավելացված արժեքի հարկը (այսուհետ նաև՝ ԱԱՀ),

բ. ակցիզային հարկը,

գ. շահութահարկը,

դ. եկամտային հարկը,

ե. բնապահպանական հարկը,

զ. ճանապարհային հարկը,

է. շրջանառության հարկը,

ը. արտոնագրային հարկը.

2) տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. անշարժ գույքի հարկը,

բ. փոխադրամիջոցների գույքահարկը:

Հայաստանի Հանրապետությունում չեն կարող սահմանվել այնպիսի հարկեր, որոնք նախատեսված չեն սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով:

Համաձայն՝ ՀՀ Հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. պետական տուրքը,

բ. բնօգտագործման վճարը,

գ. սոցիալական վճարը,

դ. ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը,

ե. հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը,

զ. կենսաթոշակային վճարը.

2) տեղական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. տեղական տուրքը,

բ. տեղական վճարը:

Ընկերությունը նշել է, որ այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ ՀՀ Հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները հստակ սահմանում են այն բոլոր հարկերի և վճարների տեսակները, որոնց նկատմամբ հսկողություն է իրականացվում հարկային մարմնի կողմից, այլ կերպ ասած վերոգրյալից հետևում է, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ չէ դրոշմանիշային վճարը:

Ընկերությունը նշել է, որ ասվածը հիմնավորվում է նաև 2017թ. հուլիսի 19-ի ՀՀ կառավարության ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ թիվ 228-Ն հրամանով, որով սահմանվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը:

Նշված որոշման հավելվածի համաձայն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով (այդ թվում՝ հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդի

միջոցների գծով) պետական բյուջեի հանդեպ պարտավորությունները կազմում են հետևյալ հարկատեսակները՝

ԱԱՀ

Շահութահարկ

Եկամտային հարկ

Ակցիզային հարկ

Շրջանառության հարկ

Արտոնագրային հարկ

Բնապահպանական հարկ

Ոչ ռեզիդենտի շահութահարկ

Սոցիալական վճար

Պետական տուրք

Բնօգտագործման վճար

Այլ հարկային եկամուտներ

Ընդամենը

Ընկերությունը հայտնել է, որ վերոգրյալից հետևում է, որ 2017թ. հուլիսի 19-ի ՀՀ կառավարության թիվ 228-Ն հրամանի համաձայն սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն նախատեսված չէ:

Ավելին, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանի համաձայն՝ սահմանվել է վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Ընկերությունը հայտնել է, որ ուշագրավ է այն հանգամանքը, որ հայտ ներկայացնելիս «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն առաջնորդվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում առկա տեղեկատվությամբ, որից հստակ երևում է, որ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն որևէ հարկային պարտավորություն չի ունեցել, դեռ ավելին համաձայն նույն քաղվածքի «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն ունեցել է գերավճար:/Ծանուցում՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանը/:

Այսինքն, ևս մեկ հիմնավոր փաստարկ, որ դրոշմանիշային վճարը չի հանդիսանում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ, հակառակ պարագայում հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում առանձին տող կլիներ նաև դրոշմանիշային վճարի մասով:

Ընկերությունը հայտնել է, որ նշված փաստերը հիմք են հանդիսանում հաստատապես հայտնելու, որ 25.02.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը անհիմն է, քանի որ դրոշմանիշների վճարը չի հանդիսանում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ, հետևաբար անկախ պարտավորության առկայությունից կամ բացակայությունից այդ հիմքով մասնակցի հայտը ենթակա չէր մերժման:

Նմանատիպ իրավական դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը թիվ ՍՑ-ԷՍ-2018/133 որոշմամբ, ինչպես նաև 05.11.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/87 որոշմամբ:

Ընկերությունը հայտնել է, որ վերոգրյալի ամփոփումից հետևում է, որ «ՀԱԷԿ»ՓԲԸ-ի կողմից «Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ»-ի կարիքների համար «ջեռուցման մարտկոցներ» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-3/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում գնահատող հանձնաժողովը չի կիրառել 2018թ. հունիսի 11-ի ՀՀ կառավորության թիվ **702-L որոշումը,ՀՀ** Հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները, 2017թ. հուլիսի 19-ի ՀՀ կառավարության թիվ 228-Ն հրամանը, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանը, որի հետևանքով խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի պահանջները, ինչն էլ հանգեցրել է «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի

իրավունքների ոտնահարմանը և խոչընդոտներ են ստեղծել էլեկտրոնային աճուրդին վերջինիս մասնակցության համար:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու ... գնահատող հանձնաժողովի ...գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու ... գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

Ընկերությունը բողոքին կից որպես ապացույց ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի և ՊԵԿ-ի կողմից 21.12.2018թ. տրված թիվ 2082 տեղեկանքի պատճենները:

Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է դադարեցնել 25.02.2019թ. գնահատող հանձնաժողովի կողմից կայացված թիվ 3 արձանագրությունը և պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին թիվ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-3/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդում «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.03.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ««ՀԱԷԿ»ՓԲԸ-ի կողմից ս/թ. փետրվարի 4-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-3/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որով կայանի կարիքների համար ձեռք էին բերվելու ջեռուցման մարտկոցներ:

«ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-3/19» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված վեջնաժամկետին ներկայացվել են հայտեր հետևյալ կազմակերպությունների կողմից՝ «Հարությունյան Շին» ՍՊԸ, «ՄԱԺԷՎ» ՍՊԸ, «Էլիտ Հիլզ» ՍՊԸ, «Մարմիկ» ՍՊԸ, Գրիգոր Այվազյան ԱՁ-ն:

Ցածր գնային առաջարկով ներկայացրած գնային առաջարկով՝ 7 752 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որն արձանագրվել է գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությամբ:

Մասանկիցը պատշաճ ծանուցվել է հրավերով սահմանված որակավորումն հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու պահանջի վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղար Մ. Մանավջյանի կողմից 13.02.2019թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ուղարկել Ընկերության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման նպատակով տեղեկատվություն ստանալու համար:

18.02.2019թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացվել է տեղեկատվություն, ըստ որի «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 329 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Ժամկետանց հարկային պարտավորությունների հետ կապված՝ մասնակցի կողմից ներկայացվել էր «Արդշին» ՓԲԸ-ի կողմից տրամադրված վճարման հանձնարարագիր թիվ 308 առ 19.02.2019թ. 329 000 ՀՀ դրամը վճարված լինելու մասին, սակայն ներկայացված փաստաթուղթը գնահատող հանձնաժողովը գնահատեց անբավարար, քանի որ համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի՝ գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություններ»:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է և ենթակա չէ բավարարման, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ուներ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.03.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ԱՄ-2019/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ»-ի կարիքների համար ջեռուցման մարտկոցներ ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-3/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Աճուրդ), որին մասնակցության հայտ են ներկայացրել «Հարությունյան Շին» ՍՊԸ:

2 Աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.02.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 18.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Հարությունյան Շին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 329 000 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս ունի ժամկետանց հարկային պարտավորություն:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի 04.03.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող

հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն .զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած

տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով, «Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ»-ի կարիքների համար ջեռուցման մարտկոցներ ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-3/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Աճուրդ), որին մասնակցության հայտ են ներկայացրել «Հարությունյան Շին» ՍՊԸ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.02.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 18.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Հարությունյան Շին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 329 000 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս ունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքով ներկայացրել է 09.02.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 09.02.2019թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Միաժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ՀՎՍ վարչության տեղեկանքը՝ առ այն, որ 09.02.2019թ. դրությամբ Ընկերության 329 000 ՀՀ դրամ պարտավորությունը դրոշմանիշային վճարի մասով է:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն .զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված

տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.02.2019թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 329 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Այսպիսով, ուսումնասիրելով Ընկերության 09.02.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 09.02.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի, առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ, Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նման փաստական հանգամանքներով կայացրել է ԳԲԽ-ԱՄ-2018/83 և ԳԲԽ-ԱՄ-2018/87 որոշումները, որոնց շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն գրությամբ հայտնել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերությունները պարտավորությունները կատարելիս առաջնորդվել են բացառապես էլեկտրոնային համակարգի անձնական գրասենյակում անձնական հաշվի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն ընկերությունը ժամկետանց պարտավորություններ չի

ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով դրոշմանիշային վճարների պարտավորությունները որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ համարելու վերաբերյալ հարկ վճարողի իրազեկված չլինելը, ուստի տվյալ պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակցության առումով, չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ Ընկերության բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված հետևյալ պահանջին, այն է՝ պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին թիվ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-3/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդում «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն է որոշում գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Հաշվի առնելով վերը նշված հոդվածների դրույթները, գտնում եմ, որ բողոքի պահանջը սույն մասով ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից 04.03.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝

1. «Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-3/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 25.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, մասնավորապես՝ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Բողոքի պահանջը՝ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ